ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

Հայաստանի Հանրապետության կառավարության և Բուլղարիայի Հանրապետության կառավարության միջև զբոսաշրջության բնագավառում համագործակցության մասին

Հայաստանի Հանրապետության կառավարությունը և Բուլղարիայի Հանրապետության կառավարությունը, այսուհետ՝ Պայմանավորվող կողմեր,

գիտակցելով, որ զբոսաշրջությունը կարևոր միջոց է երկու պետությունների ժողովուրդների միջև փոխըմբռնման և բարեկամական հարաբերությունների ամրապնդման համար,

ցանկություն հայտնելով նպաստել երկու երկրների կյանքին, պատմությանը և մշակութային ժառանգությանը լավագույնս ծանոթացմանը, երկու երկրների բնական ռեսուրսների պահպանմանը,

ղեկավարվելով Միավորված ազգերի կազմակերպության 1963 թվականի սեպտեմբերին Հռոմում կայացած՝ զբոսաշրջության և միջազգային ճամփորդությունների կոնֆերանսի սկզբունքներով և հանձնարարականներով, ինչպես նաև Զբոսաշրջության համաշխարհային կազմակերպության Կանոնադրությանը համապատասխան,

համաձայնեցին ներքոհիշյալի մասին.

Հոդված 1

Պայմանավորվող կողմերը, սույն Համաձայնագրին և իրենց ներպետական օրենսդրությանը, ինչպես նաև Պայմանավորվող կողմերի մասնակցությամբ այլ միջազգային համաձայնագրերին համապատասխան, կնպաստեն միմյանց երկրների միջև զբոսաշրջության բնագավառում համագործակցության զարգացմանն ու ամրապնդմանը՝ իրավահավասարության և փոխշահավետության հիման վրա:

Հոդված 2

Պայմանավորվող կողմերը կաջակցեն և կխրախուսեն իրենց՝ զբոսաշրջության բնագավառում իրավասու պետական մարմինների գործունեությունը, որն ուղղված է երկու երկրների միջազգային զբոսաշրջության զարգացմանը մասնակցող կազմակերպությունների,

ձեռնարկությունների և ընկերությունների միջև համագործակցության հաստատմանը և զարգացմանը:

Հոդված 3

Պայմանավորվող կողմերը, իրենց ազգային օրենսդրությանը համապատասխան, կձգտեն երկու երկրների միջև զբոսաշրջիկների փոխանակման հետ կապված վարչական պայմանավորվածությունների պարզեցմանը:

Հոդված 4

Պայմանավորվող կողմերը կաջակցեն ինչպես կազմակերպված խմբային, այնպես էլ անհատական զբոսաշրջության տարածմանը, ներառյալ՝ բուժական նպատակներով, կփոխանակեն մասնագիտացված խմբեր՝ սպորտային միջոցառումներին, երաժշտական և թատերական փառատոներին, ցուցահանդեսներին, գիտաժողովներին, կոնգրեսներին մասնակցելու նպատակով:

Հոդված 5

Պայմանավորվող կողմերը կխրախուսեն և կաջակցեն իրենց՝ զբոսաշրջության բնագավառում պետական իրավասու մարմինների միջև զբոսաշրջությանը վերաբերող տեղեկության փոխանակմանը՝ մասնավորապես.

- զբոսաշրջային գործունեությունը կարգավորող օրենսդրական և նորմատիվ բազայի վերաբերյալ,
- զբոսաշրջային շուկայի վիճակի, զբոսաշրջության բնագավառում փորձի և ձեռքբերումների վերաբերյալ,
- հյուրանոցների և զբոսաշրջիկների տեղավորման այլ վայրերի կառավարման փորձի վերաբերյալ,
- վիճակագրական, տեղեկատվական-լրատվական և գովազդային նյութեր,
- զբոսաշրջային հետաքրքրություն ներկայացնող՝ բնության և մշակութային արժեքների պաշտպանության և պահպանության ոլորտում ազգային օրենսդրության վերաբերյալ,
- զբոսաշրջության բնագավառում ներդրումների առաջարկների վերաբերյալ:

Հոդված 6

Պայմանավորվող կողմերը միմյանց կօժանդակեն զբոսաշրջության բնագավառի մասնագետ կադրերի պատրաստման, զբոսաշրջության բնագավառում գիտական աշխատողների և մասնագետների փոխանակման հարցերում, ինչպես նաև կնպաստեն երկու երկրների զբոսաշրջության բնագավառում հետազոտություններ իրականացնող կազմակերպությունների միջև համատեղ գործունեության ու սերտ կապերի հաստատմանը:

Հոդված 7

Պայմանավորվող կողմերը կաջակցեն թղթակիցների և լրագրողների փոխանակմանը և փոխադարձ այցելություններին՝ երկու երկրների զբոսաշրջային ներուժի վերաբերյալ հասարակությանը լավագույնս տեղեկացնելու նպատակով:

Հոդված 8

Պայմանավորվող կողմերից յուրաքանչյուրը մյուս Պայմանավորվող կողմի պետության տարածքում կարող է բացել զբոսաշրջության բնագավառում տեղեկատվության հարցերով իր ներկայացուցչությունը, որը չի իրականացնի առևտրային գործունեություն:

Ներկայացուցչությունների գործունեությունը կկարգավորվի Կողմերի միջև ստորագրվող առանձին համաձայնագրով:

Հոդված 9

Տնտեսական, արդյունաբերական, առևտրային և տեխնիկական համագործակցության հայ-բուլղարական համատեղ միջկառավարական հանձնաժողովի շրջանակներում ստեղծվում է զբոսաշրջության հարցերով աշխատանքային խումբ, որը կհետևի և կվերլուծի սույն Համաձայնագրից բխող պարտավորությունների կատարումը, ինչպես նաև կքննարկի զբոսաշրջության բնագավառում փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող այլ հարցեր:

Հոդված 10

Պայմանավորվող կողմերը միմյանց կտեղեկացնեն սույն Համաձայնագրի կատարմանը վերաբերող հարցերի վերաբերյալ և

անհրաժեշտության դեպքում նրանում կկատարեն փոփոխություններ և լրացումներ:

Պայմանավորվող կողմերի փոխադարձ համաձայնությամբ սույն Համաձայնագրում կարող են կատարվել փոփոխություններ և լրացումներ, որոնք կձևակերպվեն առանձին արձանագրություններով, կհանդիսանան սույն Համաձայնագրի անբաժանելի մասը և ուժի մեջ կմտնեն սույն Համաձայնագրի 11-րդ հոդվածով նախատեսված կարգով:

Հոդված 11

Սույն Համաձայնագիրը ուժի մեջ է մտնում դիվանագիտական ուղիներով երկրորդ գրավոր ծանուցումը ստանալու պահից 30 /երեսուն/ օր անց, որոնց միջոցով Կողմերը միմյանց տեղեկացնում են սույն Համաձայնագրի ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ներպետական ընթացակարգերի կատարման մասին:

Համաձայնագիրը կնքվում է հինգ տարի ժամկետով և ինքնաբերաբար կերկարաձգվի հաջորդ հինգ տարիների համար, եթե Պայմանավորվող կողմերից ոչ մեկը ոչ ուշ, քան 6 ամիս առաջ մինչև համապատասխան ժամկետի լրանալը գրավոր չհայտնի մյուս Կողմին Համաձայնագրի գործողությունը դադարեցնելու իր մտադրության մասին:

Սույն Համաձայնագրի գործողության դադարեցումը չի ազդում այն ծրագրերի և նախագծերի կատարման վրա, որոնք համաձայնեցվել են նրա գործողության ժամկետում, եթե Պայմանավորվող կողմերը այլ կերպ չեն պայմանավորվում:

Կատարված է Երևան քաղաքում 1999 թվականի դեկտեմբերի 1-ին, երկու բնօրինակով, յուրաքանչյուրը՝ հայերեն, բուլղարերեն և ռուսերեն, ընդ որում բոլոր տեքստերն էլ հավասարազոր են:

Սույն Համաձայնագրի դրույթների մեկնաբանման ընթացքում տարաձայնություններ առաջանալու դեպքում կգերակայի ռուսերեն տեքստը:

Համաձայնագիրն ուժի մեջ է մտել 2000 թվականի օգոստոսի 2-ից: